ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ /1-ին/

<<ՄՎ ՇԻՆ>> ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Վայոց ձորի մարզի Արին բնակավայրի վարչական տարածքում նախատեսվող բազալտների երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ հանրային քննարկումներ /1-ին քննարկում/:

2025թ. մարտի 28-ին ժամը 11:00-ին, ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Արին բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ <<ՄՎ ՇԻՆ>> ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Արին բնակավայրի վարչական տարածքում բազալտների երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ հանրային քննարկումներ /1-ին քննարկում/:

Հանրային քննարկումներին մասնակցում էին ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Արին բնակավայրի վարչական ղեկավար՝ Մանվել Ավետիսյանը, ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի համայնքապետարանի քաղաքաշինության բաժնի պետ Սամվել Իխտիարյանը, Վայք համայնքի ղեկավարի օգնական Մեսրոպ Մեսրոպյանը, Բնապահպանության և Գյուղատնտեսության բաժնի պետ Գարիկ Գևորգյանը, Զարգացման ծրագրերի, սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժնի պետ Նորայր Հովակիմյանը, <<ՄՎ ՇԻՆ>> ՍՊԸ-ի տնօրեն Մ. Շամյանը, Ընկերության բնապահպանական խորհրդատուն, համայնքի և բնակավայրի բնակիչներ:

Ելույթ ունեցան

ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Արին բնակավայրի վարչական ղեկավար՝ Մանվել Ավետիսյանը, նշեց, որ համայնքում իրականացնում են 1-ին հանրային քննարկումները: Համայնքը պատշաճ ծանուցված է, ամեն ինչ նորմայի սահմաններում է, մենք շահագրգռված ենք, որ իրականացնեն նման գործունեություններ, որ որոշակի ընտանիքներ աշխատեն, բարելավվի համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը:

<<ՄՎ ՇԻՆ>> ՍՊԸ-ի բնապահպանական խորհրդատուն ներկայացրեց ՀՀ օրենսդրությունը, որ համաձայն <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի երկրաբանական ուսումնասիրության

աշխատանքները ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության 2 հանրային քննարկումների իրականացմամբ, ներկայացրեց իրենց մտադրությունները, որ եթե համայնքը կտա իր նախնական համաձայնությունը՝ ավագանու որոշմամբ, ընկերությունը կսկսի նախագծային աշխատանքները:

Նշեց նաև, որ նախատեսվելիք աշխատանքներն իրականացվելու են ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների համապատասխան:

Ընկերությունն իր պատրաստակամությունն է հայտնում պարբերաբար հանդիպելու համայնքի ղեկավարության հետ, քննարկելու անհրաժեշտ օգնության ծրագրերը և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքի բյուջե:

Ելույթ ունեցան համայնքի և բնակավայրի բնակիչներ, ովքեր միաձայն ողջունեցին նախատեսվող գործունեությանը:

Ամփոփելով հանրային քննարկման արդյունքները՝ մասնակիցները որոշեցին հավանություն տալ <<ՄՎ ՇԻՆ>> ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Արին բնակավայրի վարչական տարածքում նախատեսվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներին:

Կից ներկայացվում է մասնակիցների ցանկը՝ 1 թերթ:

Քննարկումների պատասխանատու և վարող՝ Վայքի համայնքապետարանի գյուղատնտեսության և բնապահպանության բժանի պետ Գարիկ Գևորգյան

Ձեռնարկող՝ «ՄՎ ՇԻՆ» ՍՊԸ տնօրեն Մինաս Շամլյան

ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐ

Անուն, ազգանուն	ստորագրություն	Հեռ.
[illegible]		093026696
[illegible]		077-19-10-58.
[illegible]		098-19-80-89
[illegible]		077 447305
[illegible]		094566203
[illegible]		077657072
[illegible]		094 73.50.82
[illegible]		077909613
[illegible]		091098148
[illegible]		094201031
[illegible]		094811980
[illegible]		093893240
[illegible]		093875876
[illegible]		091330607
[illegible]		091472939